

Հուշաթերթ

**Հյուսիսային համալսարանի ամբիոնի 2018-2019 ուստարվա հետազոտական
աշխատանքի պլանի* մշակման ու իրականացման**

1. Հյուսիսային համալսարանի ամբիոնները 2018-2019 ուստարվա իրենց հետազոտական աշխատանքի պլանը կազմելիս պետք է ելնեն բարձրագույն դպրոցի առջև ծառայած արդի հիմնախնդիրներից, բարձրագույն կրթության զարգացման ներկա փուլի պահանջներից, դրանց իրականացման ուղղությամբ Հյուսիսային համալսարանում տարվող աշխատանքների առանձնահատկություններից:

2. Ամբիոնի հետազոտական աշխատանքի պլանում պետք է արտացոլում գտնեն կրթական բարեփոխումների խորացման, կրթության որակի ապահովման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման հարցերը:

3. Ամբիոնի հետազոտական գործունեությունն իր ամբողջության մեջ պետք է նպատակուղղված լինի՝

- գիտական աշխատանքի՝ որպես համալսարանի գործունեության կարևոր բաղադրիչի դերի ուժեղացմանը, համալսարանում իրականացվող հետազոտական աշխատանքների ակտիվացմանը, դրանց որակի ու արդյունավետության բարձրացմանը,
- համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների և ուսանողների գիտաստեղծագործական ներուժի առավել լրիվ բացահայտմանը, դրա ռացիոնալ ու նպատակամետ օգտագործմանը, համալսարանում իրականացվող հետազոտական աշխատանքներում այդ ներուժի ակտիվ ներգրավմանը,

* Ամբիոնի հետազոտական աշխատանքի տարեկան պլանը պետք է անհրաժեշտ տեղեկություններ պարունակի տվյալ ուսումնական տարում ամբիոնի նիստերում քննարկվող հետազոտական բնույթի հարցերի ու անցկացվող միջոցառումների, դրանց իրականացմանն ուղղված աշխատանքների մասին՝ կատարման կոնկրետ ժամկետների ու պատասխանատու անձանց ազգանվան նշումով:

- համալսարանի կառավարման տարբեր օղակների ու ստորաբաժանումների՝ ֆակուլտետների ու դրանց խորհուրդների, ամբիոնների, որակի ապահովման և ուսումնական վարչությունների, ուսխորհրդի, ուսանողական գիտական ընկերության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, համալսարանական մյուս օղակների առավել ակտիվ ներգրավմանը բուհում գիտական աշխատանքների կազմակերպման, ղեկավարման ու իրականացման մեջ,
- համալսարանում իրականացվող գիտական ուսումնասիրությունների պրոբլեմատիկայի հաստակեցմանը ու կոնկրետացմանը, կատարվող հետազոտությունների խորացմանը, դրանց ինչպես գիտատեսական, այնպես էլ պրակտիկ ուղղվածության ուժեղացմանը,
- կատարվող հետազոտությունների բարձր ելքային արդյունքների ապահովմանը, այդ արդյունքների ռացիոնալ ու նպատակային օգտագործմանը,
- հետազոտական և կրթական ծրագրերի միջև փոխկապակցվածության ուժեղացմանը, կատարվող հետազոտությունների պրակտիկ արդյունքների ներդրմանն ուսումնական գործընթացում,
- մերձավոր հեռանկարում համալսարանը հետազոտական աշխատանքների կենտրոն դարձնելու համար անհրաժեշտ հիմքերի ու նախադրյալների ստեղծմանը:

4. Ամբիոնի հետազոտական աշխատանքի 2018-2019 ուստարվա պլանը պետք է ներառի հետևյալ հարցերը՝

- ամբիոնի հետազոտական աշխատանքի գերակա ուղղությունների և գլխավոր թեմաների հստակեցումն ու կոնկրետացումը՝ հիմքում ունենալով համալսարանի գիտական խորհրդում 2016 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունված և նույն թվականի հոկտեմբերի 24-ին համալսարանի ռեկտորի կողմից հաստատված «Հյուսիսային համալսարանի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների (2016 թվականի սեպտեմբեր-2021 թվականի սեպտեմբեր) հեռանկարային ծրագիրը»՝ հինգ ուսումնական տարվա ընդգրկումով,
- ամբիոնի 2018-2019 ուստարվա հետազոտական աշխատանքների պլանի մշակումը, համապատասխան կարգով հաստատումը և դրա իրականացման ապահովումը,
- ամբիոնի դասախոսների գիտահետազոտական ներուժի առավել լրիվ բացահայտումն ու արդյունավետ օգտագործումը,

- գիտության տվյալ բնագավառի առավել կարևոր ու հրատապ պրոբլեմներին նվիրված գիտաժողովների (այդ թվում՝ ուսանողական ու ասպիրանտական), կոնֆերանսների, սիմպոզիումների, սեմինարների, կոլոկվիումների, կլոր սեղանների, գիտահանրամատչելի դասախոսությունների և գիտակրթական ու դաստիարակչական բնույթի այլ միջոցառումների նախաձեռնումն ու իրականացումը:

5. Ամբիոնի հետազոտական աշխատանքի 2018-2019 ուստարվա պլանում պետք է արտացոլվեն կատարվող հետազոտությունների թեմաները, կոնկրետ կատարողների ազգանունները, կատարման ժամկետները (սկիզբ և ավարտ), ուսումնասիրության արդյունքների ենթադրվող ծավալները (մամուլների քանակը) և հրապարակման հեռանկարները:

6. Ամբիոնի ուշադրության կենտրոնում պետք է լինեն՝

- ամբիոնի դասախոսների հետազոտական աշխատանքի հարցերը. ամբիոնում պետք է տեղեկություններ լինեն, մասնավորապես այն մասին, թե գիտական ինչ պրոբլեմի (թեմայի) (թեկնածուական կամ դոկտորական ատենախոսություն, մենագրություն, կոլեկտիվ հետազոտություն, դասագիրք (ուսումնական ձեռնարկ), մեթոդական ձեռնարկ, պայմանագրային աշխատանք և այլն) և ինչ հոդվածների ու հրապարակումների վրա է աշխատում դասախոսը,
- միջազգային կամ հանրապետական գիտաժողովներին, ինչպես նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվող գիտական նստաշրջաններին ամբիոնի դասախոսների մասնակցության հարցերը, մասնավորապես այն, թե այդ կապակցությամբ ինչ զեկուցումների կամ գիտական հաղորդումների վրա է աշխատում դասախոսը:

7. Ամբիոնի հետազոտական աշխատանքի պլանում պետք է անհրաժեշտ տեղ գտնեն այնպիսի հարցեր, ինչպիսին են՝

- գիտահետազոտական աշխատանքի որակի ապահովումը, դրա արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտումն ու օգտագործումը,
- ուսուցման ու հետազոտական աշխատանքների մերձեցումն ու միահյուսումը,
- նորարարական ծրագրերի մշակումն ու իրականացումը,

- գրանտային ծրագրերով իրականացվող հետազոտությունները,
- համալսարանի ուսանողական գիտական ընկերությանը անհրաժեշտ օգնության ապահովումը,
- ուսանողների գիտաստեղծագործական ներուժի բահայտումը, դրա արդյունավետ օգտագործումը, նրանց ակտիվության ու նախաձեռնությունների սատարումը, իրականացվող հետազոտություններում ուսանողների ու ասպիրանտների (այնտեղ, որտեղ նրանք կան) լայն ներգրավումը, երիտասարդ հետազոտողների շարժունության ապահովումը,
- համալսարանի ամբիոնների միջև գիտաստեղծագործական կապերի ուժեղացումը, համատեղ ծրագրերի, միջառարկայական հետազոտությունների ձեռնարկումն ու իրականացումը,
- գիտական հետազոտությունների գործնական ուղղվածության ուժեղացումը, կյանքի, պրկատիկայի հետ կապի ամրապնդումը, բուհ-աշխատաշուկա համագործակցության սերտացումը, կատարվող հետազոտությունների արդյունքների առևտրայնացումն ու վաճառահանումը, համալսարանում գիտության ինքնաֆինանսավորման սկզբունքի ներդրումը,
- հետազոտական գործունեության սոցիալ-տնտեսական արդյունավետության բարձրացումը,
- հետբուհական կրթական ծրագրերի օրինակելի իրականացումը, դրանց միջազգայնացումը,
- արտերկրի բուհերի, գիտահետազոտական կենտրոնների ու մյուս կազմակերպությունների գործընկերների հետ գիտամեթոդական համագործակցության հաստատումն ու խորացումը:

Հյուսիսային համալսարանի գիտական հետազոտությունների,

նորարարական ծրագրերի և հետբուհական

մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավար՝

Գ. Ասատրյան

«12» սեպտեմբերի 2018 թ.